

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԳԱԳԻԿԻ

ԱՐԵՎՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐԴԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (01.08.1914 թ.-03.03.1918 թ.)

Է.00.01 – «Հայոց պատմություն» մասնագիտությանը պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սիմոնյան Ա. Յ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ստեփանյան Ս. Ս.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հովհաննիսյան Լ. Յ.

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հունիսի 29-ին,
ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Նայոց
պատմության 004 մասնագիտական խորհրդում (0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան
24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Յ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հայոց ցեղասպանության թեման մշտապես գտնվել է հայ պատմաբանների ուշադրության կենտրոնում: Հարապարակվել են բազմաթիվ արխիվային փաստաթղթերի ժողովածումներ, մենագրություններ, ժամանակակիցների հիշողություններ և գիտական շրջանառության մեջ դրված այլ նյութեր, որոնց թվում կարեն տեղ են գրադեցնում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության դաշնակից կայսերական Գերմանիայի քաղաքականության լուսաբանմանը նվիրված հրատարակություններ:

Այս տեսակետից կարեն է Արևմտյան Հայաստանի նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության վերհանումը: Այն հնարավորությունը է ընձեռում ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ Հայոց ցեղասպանության վերաբերյալ, ուսումնասիրել այլ հարցում գերմանական իշխանությունների վարած քաղաքականության շարժակիթները, ինչպես նաև նպաստել 20-րդ դարի առաջին ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Թեման արդիական է նաև նրանով, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Արևմտյան Հայաստանի նկատմամբ Գերմանիայի վարած քաղաքականությունն անկողմնակալ գնահատելու միջոցով հնարավոր է մշակել այնպիսի միջոցներ, որոնք այսօրվա գերմանական իշխանություններին կդրդեն ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը: Ասվածն ավելի ակնբախ է դառնում, եթե հաշվի առնենք, որ չնայած Գերմանիայի Բունդեսբազը 2005 թ. Թուրքիայի կառավարությանը կոչ արեց ընդունել սեփական «պատմական պատմահանտվությունը», սակայն ինքը մինչ օրս ձեռնպահ է մնում կատարված ցեղասպանություն որակելուց:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԱԾ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴՐԻՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է արխիվային և հրատարակված վավերագրերի, գիտական ուսումնասիրությունների հիման վրա անկողմնակալ կերպով լուսաբանել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանի նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականությունը: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- բացահայտել Գերմանիայի ծրագրերը արևմտահայության նկատմամբ Առաջին աշխարհամարտի նախօրյակին և պատերազմի սկզբնական ժամանակաշրջանում,
- ներկայացնել Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը երիտթուրքերի պանթուրքիստական ծրագրերի նկատմամբ,
- անդրադարձնալ արևմտահայության տեղահանության և կոտորածների երիտթուրքական ծրագրի կազմնանը Գերմանիայի դեկավարության մասնակցության հարցին,
- անդրադարձնալ Գերմանիայի դեկավարության կողմից Հայոց ցեղասպանությունը կանխելու հնարավորությանը,
- անդրադարձնալ հայերի տեղահանության և կոտորածների հարցում գերմանացի զինվորականների և դիվանագետների դիրքորոշմանը,
- ներկայացնել գերմանական կառավարության և գերմանացի գործիչների դիրքորոշումը հայ գաղքականության նկատմանը,
- ցույց տալ Արևմտյան Հայաստանի նկատմամբ Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ընթացքում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԱԾ ՍԵԹՈՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսությունը շարադրված է տարաբնույթ սկզբնադրյուրների և թենային վերաբերող գրականության

վերլուծության, ինչպես նաև փաստերի պատճառնական կամ պատճառվերլուծական մերողով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԱԾԱԿԱՎԱԿԱՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՆԵՐԸ: Ատենախոսությունն ընդգրկում է 1914 թ. օգոստոսից մինչև 1918թ. մարտը, այն է՝ Առաջին աշխարհամարտի սկզբից մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը նենկած ժամանակահատվածը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԱԾԱԿԱՎԱԾ ԳԻՏԱԿԱՎԱԾ ՆՈՐՈՒՅԹԸ ՈՒ ԳՈՐԾԱՎԱԿԱՎԱԾ ՆԾԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունում տարաբնույթ սկզբնաղյուրների և գիտական ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա լուսաբանվել են Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայության նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականությանը վերաբերող վիճելի հարցերը:

Ատենախոսության մեջ կենտրոնական տեղ է գրաղեցնում Հայոց ցեղասպանության հարցում գերմանացի գինվորականների և հյուպատոսների դերակատարության վերլուծությունը, քանի որ հայ պատճառիտության մեջ այն նվազ է ուսումնասիրված: Օգտագործելով արխիվային փաստարքեր՝ ատենախոսության մեջ հիմավորվում է այն դրույթը, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Կայսերական Գերմանիայի արտաքին քաղաքականության ոլորտում Արևմտյան Հայաստանը կարևոր տեղ է զբաղեցրել: Փորձել ենք նոր փաստերով գնահատել Հայոց ցեղասպանության հարցում Կայսերական Գերմանիայի մեղսակցության խնդիրը:

Ատենախոսության նյութերն ու եղանակացությունները կարող են նպաստել Հայոց ցեղասպանության հարցում Կայսերական Գերմանիայի դերակատարության խնդիրի նորովի մեկնաբանմանը, ինչպես նաև Հայոց պատճության և միջազգային հարաբերությունների հատուկ դասընթացներում և դասագրերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԱԾԱԿԱՎԱԾ ՓՈՐՁԱՔԲՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊԴ պատճության ֆակուլտետի Հայոց պատճության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հենինակի հրատարակած Հ հոդվածներում:

ԹԵՄԱՅԻ ՌԱՍՈՒՆԱՎԻՐՎԱԾՈՒԹՅԱՎԱԾԱԿԱՎԱԾ ԱՍՏԻճԱՆԸ (ԱՊՔՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՎԱԾԱԿԱՎԱԾ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Թեմայի վերաբերյալ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում կատարվել են քաղաքիկ ուսումնասիրություններ, սակայն այս հարցը լիածներ ուսումնասիրված չէ, քանի որ վերջին տարիներին նոր փաստարդերի ժողովածուների և պատճառիտական աշխատությունների հրատարակումը հնարավորություն է տալիս խնդիրն մոտենալ այլ կողմերից:

Ատենախոսության մեջ օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվի փաստարդերը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանի նկատմամբ Կայսերական Գերմանիայի ունեցած մտադրությունների, ինչպես նաև այդ հարցում մեծ տերությունների և հատկապես Ռուսաստանի վարած քաղաքականության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են պարունակում Հայաստանի ազգային արխիվի փորոքարիկ նյութերը, որոնց ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի խնդիր լուսաբանման համար:

Հայ և արտասահմանցի հենինակների խճագրությամբ հրատարակվել են գերմանական փաստարդերի ժողովածուներ, որոնցում կարևոր ուշադրություն է դարձվում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանի նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության ներկայացմանը:

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 43, գ. 1, գ. 83, ֆ. 57, գ. 5, գ. 20, 21, 82, 89, 94, 100, 102, 108, 115, 149, 151, 176, 182, 188, 206, ֆ. 200, գ. 1, գ. 80, ֆ. 374, գ. 1, գ. 4, ֆ. 1267, գ. 4, գ. 1, 55, ֆ. 450, գ. 2, գ. 92:

Արևանտահայության նկատմամբ Գերմանիայի վարած քաղաքականության վերաբերյալ կարևոր տեղեկություններ է պարունակում Ստ. Ստեփանանի խնճագրությամբ հրատարակված փաստաթղթերի և նյութերը ժողովածուները²: Ժողովածուները արժեքավոր են նաև նրանով, որ հեղինակն օգտագործել է ոչ միայն գերմանական արխիվային փաստաթղթերը, այլև ժամանակի պետական ու հասարակական գործիքների հուշերը հայկական կոտորածների և գերմանական քաղաքականության վերաբերյալ: Խնճրի ուսումնասիրության համար արժեքավոր է Ստ. Ստեփանանի խնճագրությամբ ու առաջարանով հրատարակված գերմանացիներ Վ. և Զ. Գուստերի կազմած գերմանական արխիվային փաստաթղթերի ժողովածուն, որում գետեղված են հիմնականում Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում ծառայող գերմանացի դիվանագետների գեկուցագրերը Հայոց ցեղասպանության մասին:

Հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի դերակատարության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի ակադեմիկոս Վ. Միքայելյանի խնճագրությամբ լույս տեսած փաստաթղթերի ժողովածուն, որտեղ գետեղված են Գերմանիայի արտգործնախարարության արխիվում գտնվող բազմաթիվ փաստաթղթեր³, որոնք խնդրի լուսաբաննան համար օգտագործվել են մեր կողմից: Առաջարանում Վ. Միքայելյանը, անդրադառնալով արևանտահայության նկատմամբ գերմանական դեկավարության վարած քաղաքականությանը, իրավացիրեն նկատում է, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Կայսերական Գերմանիան վարում էր թուրքամետ քաղաքականություն: Հարկ է նշել, որ սույն ժողովածուն 2004 թ. վերահսկառարակվել է գերմաններեն, ինչը կարևոր քայլ է միջազգային հանրությանը Հայոց ցեղասպանության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ տրամադրելու առունով: Նույն բվականին Վ. Միքայելյանի խնճագրությամբ և առաջարանով լույս է ընծայվել Հայոց ցեղասպանության վերաբերյալ մեկ այլ արժեքավոր փաստաթղթերի ժողովածու, որում առաջին անգամ հրապարակվել և գիտական շրջանառության մեջ են դրվել Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար կարևոր փաստաթղթեր⁴:

Աշխարհամարտի տարիներին արևանտահայության նկատմամբ Գերմանիայի վարած քաղաքականության առնչվող կարևոր փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ են տպագրվել նաև սփյուռքահայ հետազոտողների կողմից: Մասնավորապես օգտագործել ենք Ա. Օհանջանյանի հրատարակած ավստրո-հունգարական փաստաթղթերի ժողովածուն⁵: Ավստրո-Հունգարիան Գերմանիայի դաշնակիցն էր, որի՝ Թուրքիայում ծառայող դիվանագետները նույնպես ականատես եղան Հայոց Եղեղնին և Վիեննա ուղարկած զեկուցագրերում կարևոր տեղեկություններ

² Германские источники о геноциде армян, Период первой мировой войны, сборник документов и материалов в 2-х томах, под редакцией проф. С. Степаняна, том 1, Ереван, 1991. Նույնի՝ Геноцид армян, Официальные документы из германских архивов, публикуемые впервые, Составители Вольфганг и Зигпид Густы, под ред. с предисловием и прим. д. и. н., проф. Ст. Степаняна, Ереван, 2005.

³ Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии, сборник под ред. В. Микаеляна, Ереван, 1995. Նույնի՝ Mikaeljan W., Die Armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei 1913-1919, Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, Jerewan, 2004.

⁴ Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1916 թթ.), ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող և առաջարանի հեղինակ՝ Վ. Միքայելյան, Եր., 2004:

⁵ Ohandjanian A., Österreich Ungarn und Armenien 1914-1918, Wien, 1988.

Էին հաղորդում հայերի հարցում գերմանացի գործիչների դիրքորոշման վերաբերյալ:
Հայոց ցեղասպանության հարցում Կայսերական Գերմանիայի վարած
քաղաքանության ուսումնասիրության համար մեծ արժեք է ներկայացնում Վ.
Դադրյանի կողմից եվրոպական արխիվներից քաղված պաշտոնական փաստաթղթերի
ժողովածուն: Ժողովածուի մեջ անփոփած փաստաթղթերն ու նյութերը կարևոր
տեղեկություններ են պարունակում Առաջին աշխարհամարտի տարիներին
արևմտահայության մկանամբ եվրոպական տերությունների վարած
քաղաքանության վերաբերյալ:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ Յ. Լեփսիուսի հրատարակած
փաստաթղթերի ժողովածուն արանձնանում էր նրանով, որ այն առաջինն էր, որտեղ
օգտագործվել են Գերմանիայի արտգործնախարարության դիվանագիտական
տեղեկագրերը⁶: Նշված ժողովածուն երկու հատորներով հրատարակվել է նաև հայերն:՝
Դարկ է նշել, որ նշված փաստաթղթերի ժողովածուն տարբեր հեղինակների կողմից
արժանացել է քննադատության, քանի որ, ըստ նրանց, Յ. Լեփսիուսը միտուննավոր չի
հրապարակել այն փաստաթղթերը, որոնցում առկա են Հայոց ցեղասպանության
հարցում Կայսերական Գերմանիայի մեղսակցությունը հաստատող փաստեր: Մեր
կարծիքով Գերմանիայի արտգործնախարարությունը Յ. Լեփսիուսին չի տրամադրել
այնպիսի փաստաթղթեր, որոնք առնչվում են Հայոց ցեղասպանության հարցում
գերմանական կառավարության մեղսակցությանը, սակայն դա չի նստացնում Վերջինին
հրատարակած փաստաթղթերի ժողովածուի արժեքը: Այդ հարցին մանրամասն
անդրադարձել է Ա. Հայրունին⁷: Ուստի նպատակահարմաք չենք գտնում այդ խնդիրին ևս
մեկ անգամ անդրադառնալ:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական արխիվային
փաստաթղթերի հրատարակման գործում մեծ աշխատանք է իրականացրել գերմանացի
հեղինակ Վ. Գուստը⁸: Գերմանիայի արտգործնախարարության արխիվում պահպող և
Հայոց ցեղասպանությանը վերաբերյալ կարևոր նյութեր են զետեղված Գուստի
խմբագրությամբ հրատարակված «Հայերի ցեղասպանությունը 1915-1916»
փաստաթղթերի ժողովածուում⁹: Այս ուսումնասիրությունում անփոփած
փաստաթղթերի մի մասն առաջին անգամ է հրատարակվում և լրացրանում է

⁶ Dadrian V., Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, Reprinted from «The Widenning Circle of Genocide: A Critical Biographic Review», Edited by Israel Charny, 1994, Vol 3, New Brunswick, 1994.

⁷ Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Mit einem Vorwort zur Neuauflage von Tessa Hofmann und einem Nachwort von M. Rainer Lepsius, Bremen, 1986.

⁸ Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատարակությունը և ներառնությունը դրկտոր Յ. Լեփսիուսի, հ. I, Եր., 2006: Նույնի՝ Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատարակությունը և ներառնությունը դրկտոր Յ. Լեփսիուսի, հ. II, Եր., 2008:

⁹ Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի Առաքելությունը, Եր., 2002:

¹⁰ Վ. Գուստը ծնվել է 1935 թ. Հանովերում: 1965 թ. ստացել է վաճառականի մասնագիտություն, իսկ հետո մինչև 1993 թ. աշխատել «Der Spiegel» ամսագրում իրեն «Տնտեսություն և արտերկիր»
բաժնի խմբագրի և այնուհետև նույն ամսագրի փարիզյան գրասենյակի ղեկավար: 1993 թվականից
զրադշում է հրապարակախոսական գործունեությամբ և Հայոց ցեղասպանության
ուսումնասիրությամբ:

¹¹ Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916, Եր., 2008: Նույնի՝ Gust W., Der Völkermord an den Armeniern 1915/1916, Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts Springe, Deister, 2005.

Գերմանիայի դիրքորոշումը Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Յարկ է նշել, որ Գուտի նշված աշխատության հայերեն բարգնանությունը, իր գերմաներեն բնօրինակի համեմատությամբ, աչքի է ընկնում ուղղագրական և ոճական բազմաթիվ վրիպակներով:

Յայաստանում և սփյուռքում հրատարակվել են ոչ մեծարիվ աշխատություններ, որոնք նվիրված են Արևմտյան Հայաստանի նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության ուսումնասիրությանը: Ուստի նախակահարմար ենք գտնում թեմային և դրան առնչվող պատմագիտական խնդիրների ուղղությամբ հայ հեղինակների աշխատությունները դասակարգել ըստ դրանց հրատարակման ժամանակաշրջանի: Յայ առաջին հեղինակներից մեկը, որն անդրադարձել է Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայության նկատմամբ Գերմանիայի վարած քաղաքականությանը, Յ. Յակոբյանն էր՝ իր «Թիւրքիան գերման ճանկերուն մեջ» մենագրությամբ¹²: Ենինակը իր աշխատության մեջ այն կարծիքն է հայտնում, որ Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը որոշվում էր Բերլինում, ինչը վիճակարույց տեսակետ է: Սկզբանական վավերագիրներու համեմատ» մենագրության մեջ առաջին հայ ուսումնասիրողն էր, որ օգտագործեց գերմանական դիվանագիտական տեղեկագրերը¹³: Նշված ժամանակաշրջանում են տպագրել հայ հեղինակներ Մուշեղ արքեպիսկոպոսի¹⁴, Ս. Ակունու¹⁵, Ա. Անտոնյանի¹⁶, Գ. Պալաքյանի¹⁷, Կ. Պոլսի նախկին պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի¹⁸ աշխատությունները: Նշված հեղինակների ուսումնասիրություններից կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն Զավեն արքեպիսկոպոսի հուշերը, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում Կ. Պոլսի գերմանական դեսպանատան ներկայացուցիչների ու հայ պատրիարքի միջև տեղի ունեցած բանակցությունների և հայերի նկատմամբ գերմանական կողմի ունեցած մտադրությունների մասին: Ակունու աշխատությունն աչքի է ընկնում նրանով, որ հեղինակը Յայոց ցեղասպանության խրախուսման համար մեղադրում է գերմանական իշխանություններին և նրանց հասցեին կոչտ մեղադրանքներ հնչեցնում: Յայ գաղթականության նկատմամբ գերմանական իշխանությունների դիրքորոշման վերաբերյալ կարևոր տեղեկություններ է պարունակում Ա. Անտոնյանի աշխատությունը, որը հարուստ է այդ դեպքերի վերաբերյալ ժամանակակիցների վկայություններով:

Խորհրդային պատմագրության մեջ Արևմտյան Հայաստանի նկատմամբ Գերմանիայի դիրքորոշմանն ու դերակատարմանն անդրադարձել են Լեոն¹⁹, Ար.

¹² Յակոբյան Յ., Թիւրքիան գերման ճանկերուն մեջ, Թիֆլիս, 1918:

¹³ Տաշեան Յ., Յայ ազգի տարագրութիւնը գերմանական վավերագիրներու համեմատ, Վիեննա, 1921:

¹⁴ Մուշեղ արքեպիսկոպոս, Յայկական մղձավանշը, քննական վերլուծումներ, Պոստոն, 1916:

¹⁵ Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմությունը (1914-1918), Կոստանդնուպոլիս, 1921:

¹⁶ Անտոնյան Ա., Մեծ ոճիրը. Յայկական վերջին կոտորածները և Թալէադ փաշան, Պաշտոնական հեռագրեր, Բոստոն, 1921:

¹⁷ Օ. ծ. վարդ. Պալաքեան, Յայ գողգոթան, Դրվագներ հայ նարտիրոսագրութենէն, Բեռլինն դէպի Ձոր, 1914-1920, հատոր I, Վիեննա, 1922:

¹⁸ Զաւեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, Վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրե, 1947:

¹⁹ Լեոն, Անցյալից, Թիֆլիս, 1925:

Մնացականյանը²⁰, Ե. Սարգսյանը²¹, Ա. Ավետյանը²², Զ. Կիրակոսյանը²³, Ս. Հակոբյանը²⁴, Ս. Արզումանյանը²⁵, Ստ. Ստեփանյանը²⁶:

Ե. Սարգսյանի «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918» ուսումնասիրությունն առանձնանում է նրանով, որ հեղինակը մանրամասն ներկայացնում է 1914 թ. Գերմանա-թուրքական դաշինքը, ինչպես նաև անդրադառնում է Արաջին աշխարհամարտի տարիներին գերմանացի և թուրք գինվորականների միջև առկա տարածայնություններին:

Թեմայի ուսումնասիրման տեսանկյունից կարևոր է Ս. Հակոբյանի նշված մենագրությունը, որն անդրադառնում է Հայկական հարցում եվրոպական մեծ տերությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի վարած քաղաքականությանը: Հեղինակն աշխատության գլուխներից մեկը նվիրել է Արևմտյան Հայաստանի նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության ուսումնասիրությանը և այն կարծիքին էր, որ հայերի տեղահանությունը և կոտորածները խրախուսվում էին գերմանական իշխանությունների կողմից:

Նշված աշխատությունների շարքում առանձնանում է Ստ. Ստեփանյանի «Հայաստանը ինպերիալիստական Գերմանիայի քաղաքականության ոլորտում» մենագրությունները, որը խնդրի ուսումնասիրության տեսակետից խորհրդահայ պատմագրության առաջին գիտական ուսումնասիրություններից էր: Հեղինակը մանրամասն ներկայացնում է Գերմանիայի վարած քաղաքականությունն արևմտահայության նկատմամբ դեռևս արդուիմիշյան ժամանակներից, ապա անդրադառնում Հայոց ցեղասպանության շրջանում գերմանա-թուրքական համագործակցության պատճառներին և դրա բացասական հետևանքներին Հայկական հարցում: Ստ. Ստեփանյանի մենագրությունն աչքի է ընկնում նաև Հայոց ցեղասպանության հարցում կայսերական գերմանիայի մեղսակցության վերաբերյալ հավասարակշռված գնահատականներով:

Թվարկված մենագրություններից բացի Արևմտյան Հայաստանի նկատմամբ Գերմանիայի վարած քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր են նաև Յ. Սիմոնյանի²⁷, Զ. Կիրակոսյանի²⁸, Գ. Ղարիբջանյանի²⁹ աշխատությունները: Յ.

²⁰ Մնացականյան Ա., Գերմանա-թուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում, Եր., 1948:

²¹ Саркисян Е., Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962. Նոյնի՝ Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Եր., 1964: Նոյնի՝ Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972.

²² Аветян А., Германский империализм на Ближнем Востоке, Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса, Москва, 1966.

²³ Կիրակոսյան Զ., Արաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Եր., 1967:

²⁴ Ակոպյան Ը., Հայաստանը 1914-1917, Եր., 1969:

²⁵ Արզումանյան Ս., Հայաստան, 1914-1917, Եր., 1969:

²⁶ Степанян Ст., Армения в политике империалистической Германии (конец XIX-начало XX века), Ереван, 1975. Նոյնի՝ Ստեփանյան Ստ., Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Եր., 1998:

²⁷ Սիմոնյան Յ., Թուրք զգային թուժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986: Նոյնի՝ Թուրք-Հայկական հայրականությունների պատմությունից, Երևան, 1991:

²⁸ Կիրակոսյան Դ., Մladoturki перед судом истории, Ереван, 1989.

²⁹ Գարիբջանյան Գ., Գеноцид армян и мировая общественность, Ереван, 1989. Նոյնի՝ Գеноцид армян перед судом истории, Ереван, 1995.

Սինոնյանի «Թուրք ազգային բուժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» ուսումնասիրությունը հնարավլորություն է ընձեռնում վեր հանել գերնական կառավարության կողմից պանթուրքիզմի գաղափարախոսությանը աջակցելու դրդապատճառները: Իսկ Գ. Ղարիբջանյանի նշված աշխատությունը ներկայացված են տարբեր պետությունների, այդ բվում նաև Գերմանիայի, պետական և հասարակական գործիչները թեսակետները Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Աստեղախոսության մեջ, նշված ուսումնասիրություններից բացի, օգտագործվել են նաև Ռ. Գ. Սահակյանի³⁰, Ա. Չամբարյանի և Ստ. Ստեփանյանի³¹, Ն. Աղոնցի³², Յ. Ավետիսյանի³³, Ա. Շայրունու³⁴, Լ. Շովիաննիսյանի³⁵, Մ. Ներսիսյանի³⁶, Գ. Զալխուշյանի³⁷, Մ. Անումյանի³⁸ և այլ հեղինակների աշխատությունները: Ռ. Գ. Սահակյանի «Ցեղասպանության պատմությունից» գրքում ներկայացված տեսակետները տարբերվում են Արևմտյան Հայաստանի նկատմամբ Գերմանիայի վարած քաղաքականության վերաբերյալ շատ հայ հեղինակների հայտնած կարծիքներից: Ըստ հեղինակի՝ Գերմանիան չի աջակցել հայ բնակչության տեղահանության և կոստորածների երիտրուքական ծրագրերին ու չէր կարող կանխել թուրքերի կողմից իրականացվող Հայոց ցեղասպանությունը: Այս տեսակետները վիճահարուց են: Գերմանական արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավիրություն է տալիս իհմնովին հերթել Ռ. Գ. Սահակյանի այն տեսակետը, ըստ որի, Գերմանիայի դեկավարությունը չի խրախուսել հայության տեղահանության թուրքական ծրագիրը:

Հայության նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության, ինչպես նաև հայասեր Յոհաննես Լեփսիուսի ծավալած գործունեության վերաբերյալ հավասարակշիռ գնահատականներով աչքի է ընկնում Ա. Շայրունու՝ Յոհաննես Լեփսիուսի առաքելությանը նվիրված մենագրությունը: Նեղինակն օգտագործել է գերմանական արխիվային փաստաթղթեր, ինչպես նաև գերմանացի բազմաթիվ հեղինակների ուսումնասիրություններ, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում Մերձավոր Արևելյում գերմանացի պետական և հասարակական գործիչների կողմից ծավալած գործունեության մասին:

Հայոց ցեղասպանության հարցում Օսմանյան կայսրությունում գործող գերմանացի հյուպատոսների դիրքորոշման ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի ակադեմիկոս Վ. Միքայելյանի «Գերմանացի դիվանագետները Հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915)» ոչ ստվարածավալ մենագրությունը³⁹: Նեղինակն իրավացիորեն նկատում է, որ «հայկական

³⁰ Սահակյան Ռ. Գ., Ցեղասպանության պատմությունից, Եր., 1990:

³¹ Չամբարյան Ա., Ստեփանյան Ստ., Հայոց ցեղասպանությունը, Եր., 1995:

³² Աղոնց Ն., Յայկական հարցը և գերմանական ծրագրերը, Երկեր չորս հասորով, հ. Ա. Յայկական հարց, կազմող՝ Պ. Շովիաննիսյան, Եր., 1996:

³³ Ավետիսյան Ր., Յայկական հարցը 1918 թ., Եր., 1997:

³⁴ Շայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Եր., 2002:

³⁵ Շովիաննիսյան Լ., Հայոց ցեղասպանությունը և մեծ տերությունները. 1914-1917 թթ., Եր., 2002:

³⁶ Ներսիսյան Մ., Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Եր., 2005:

³⁷ Կալխանյան Գ., Կրասնա գրք, ուսումնական համար պատճենահանություն, Ռոստով-նա-Դոնյ, 2008.

³⁸ Անումյան Մ., Երիտրուլութերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մասնության, Եր., 2011:

³⁹ Միքայելյան Վ., Գերմանացի դիվանագետները Հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915), Եր., 1997:

ապստամբությունների» մասին երիտրուքերի տարածած կեղծ տեղեկությունները հերքվում են անգամ իրենց դաշնակից երկու դիվանագետների կողմից:

Թենայի վերաբերյալ արժեքավոր աշխատություններ են հրատարակվել նաև սփյուռքում: Այդ ուսումնասիրությունների շարքում հարկ է առանձնացնել Ա. Օհանջանյանի մենագրությունները⁴⁰: Յարկ է նշել, որ նշված աշխատությունների մեջ հեղինակն օգտագործել է ավստրո-հունգարական արխիվային փաստաթղթերը, որոնք կարենոր տեղեկություններ են հաղորդում Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության մասին: Ա. Օհանջանյանի «1915 թ. Անհերքելի վկայություններ» աշխատությունում տեղ գտած որոշ տեսակետներ վիճակարույց են: Յեղինակի կարծիքով պահիլամիզին գաղափարախոսությունը 1898 թ. առաջարկել էր գերմանացի գիտնական ու դիվանագետ Մաքս Ֆոն Օպենհայմը⁴¹, որը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ ուսումնությը ծնավորվել է ավելի վաղ: Յեղինակը, օգտագործելով ավստրո-հունգարական արխիվային փաստաթղթերը և օտար հեղինակների աշխատությունները, ներկայացնում է հայկական կոտորածների նկատմամբ երկու դաշնակից տերությունների դիրքորոշումը:

Դայոց ցեղասպանության վերաբերյալ հրատարակված մենագրությունների մեջ առանձնանում է Կահագն Դադրյանի մենագրությունը⁴², որը նվիրված է Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայության նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության ուսումնասիրություններից: Այն թենայի վերաբերյալ ամենաընդգրկուն ուսումնասիրություններից է, որտեղ գետեղված են տարրեր երկրների արխիվային փաստաթղթեր: Աստեղախոսության մեջ օգտագործվել է Վ. Դադրյանի մեկ այլ արժեքավոր աշխատությունը⁴³, որտեղ հեղինակը տարրեր պետությունների արխիվային փաստաթղթերի, ինչպես նաև այլ սկզբնադրյուրների և ուսումնասիրությունների իհման վրա խորը վելուծության է ենթարկում գերմանական իշխանությունների դիրքորոշումը Դայլական հարցում: Յարկ է նշել, որ Դադրյանը հատուկ անդրադառնում է Օսմանյան Թուրքիայում ծառայող գերմանացի գինվորականների դերակատարությանը՝ արևմտահայության տեղահանության և կոտորածների հարցում:

Ուսումնասիրության մեջ օգտագործվել են նաև այլազգի հեղինակների աշխատություններ: Դրանց թվում են Յ. Գիբրոնսի⁴⁴, Զ. Բրայսի⁴⁵, Գ. Պիհայի⁴⁶, Ք. Դինկելի⁴⁷, Վ. Գուստի⁴⁸, Է. Զոնմերի⁴⁹, Յ. Կայզերի⁵⁰, Ն. Զառւափի⁵¹, Վ. Բառլմի⁵², և այլ

⁴⁰ Ohandjanian A., Armenian: Der verschwiegene Völkermord, Wien, 1989. Նույնի՝ Օհանջանյան Ա., 1915 թ. Անհերքելի վկայություններ, Եր., 1997: Նույնի՝ Ohandjanian A., Die armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutschlands, Jerevan, 2003. Նույնի՝ Ohandjanian A., 1915. Irrefutable Evidence, Yerevan, 2004.

⁴¹ Օհանջանյան Ա., 1915 թ. Անհերքելի վկայություններ, էջ 80:

⁴² Dadrian V., German Responsibility in the Armenian Genocide, A Review of the Historical Evidence of German Complicity, Watertown, 1996.

⁴³ Dadrian V., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, Oxford, 1995: Նույնի՝ Դադրյան Վ., История армянского геноцида, этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007.

⁴⁴ Гиббонс Герберт-Адамс, Последние избиение в Армении. Факты и ответственность, Петербург, 1916. Նույնի՝ Gibbons A., The Blackest Page of Modern History, New York, 1975.

⁴⁵ Պրայս Յ., Դայերու տառապանքները Օսմանեան կայսրության մէջ 1915-1916 թթ., Պէյրութ, 1965:

⁴⁶ Պոպյան Հ., Գերմանական կայսրություն 1914-1918, Երևան, 1978.

⁴⁷ Dinkel C., German Officers and the Armenian Genocide, Armenian Review, Bd. 44, 1991.

հեղինակների մենագրություններ: Յայց ցեղասպանության հարցում գերմանացի զինվորականների դեռակատարության ուսումնասիրում հանար կարևոր նյութեր է պարունակում ք. Դինկելի նշված աշխատությունը:

Աստենախոսության մեջ օգտագործվել են նաև սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող ժամանակի քաղաքական, պետական, զինվորական և հասարակական գործիչներ՝ Պ. Ռոբրախի⁵³, Ս. Նիպագեհի⁵⁴, Լ. ֆոն Սանդերսի⁵⁵, Զենալ փաշայի⁵⁶, Ֆ. Սանսենի⁵⁷, ֆոն դեր Գոլցի⁵⁸, Յ. Մորգենթաուի⁵⁹, Յ. Ջունգլերի⁶⁰ հուշերը և աշխատությունները:

Նշված աղբյուրներն ու ուսումնասիրությունները հիմք են հանդիսացել Առաջին աշխարհամարտի տարիներին Արևմտյան Յայաստանի նկատմամբ Կայսերական Գերմանիայի վարած քաղաքականությունը լուսաբանելու համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Աստենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Ուսումնասիրության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 174 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, հարցի ուսումնասիրվածության աստիճանը, տրվել է թեմային Վերաբերող սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ԱՐԵՎՄՏԱՐԱՅՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐԴԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԵԿ ՍԿՁԲՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱԾՈՒՄ», բաղկացած է երկու ենթագլխից:

⁴⁸ Gust W., Der Völkermord an den Armeniern, Die Tragödie des ältesten Christenvolkes der Welt, München-Wien, 1993.

⁴⁹ Զննմեր Է., ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովողի կրած տառապանների մասին, գերմաներենից թարգմանեց Էվելինա Մակարյանը, Եր., 2002:

⁵⁰ Kaiser H., Aspekte eines Völkermordes, Zum 90. Gedenkjahr des Völkermordes an den Armeniern, 1915-2005, Stimmen aus Deutschland, Ischchan Tschiftdschjan (Hg.), Leipzig, 2005. Նույնի՝ Kaiser H., Die deutsche Diplomatie und der armenische Völkermord, Osmanismus, Nationalismus und der Kaukasus, Adanir F., Bonwetsch B., Wiesbaden, Reichert Verlag, 2005.

⁵¹ Զառուպ Ն., Գերմանական կայսրությունը և Յայկական հարցը (1878-1914), Եր., 2008:

⁵² Բառում Վ., Թուրքիան և նրա քրիստոնյա փորձանանությունները, Անցյալը-Տեղապահությունները-Ներկան, Եր., 2010:

⁵³ Պօրբաք Պ., Война и Германская политика, Изд. Г. Лемана и С. Сахарова, Москва, 1915. Նույնի՝ Rohrbach P., Der Krieg und die deutsche Politik, Dresden, 1914. Նույնի՝ Rohrbach P., Die Bagdadbahn, Berlin, Verlag von Wiegandt & Grießen, 1911. Նույնի՝ Rohrbach P., Deutschland unter den Weltvölkern, Materialien zur auswärtigen Politik, Berlin-Schöneberg, 1912. Նույնի՝ Rohrbach P., Weltpolitisches Wanderbuch 1897-1915. Leipzig, 1916.

⁵⁴ Nipage M., The Horrors of Aleppo, London, 1918.

⁵⁵ Sanders L., Fünf Jahre in der Türkei, Berlin, 1920.

⁵⁶ Джемаль-паша, Записки Джемаль-паши, 1913-1919, Тифlis, 1923.

⁵⁷ Nansen F., Armenia and the East, London, George Allen & Unwin Ltd., 1928.

⁵⁸ Colmar Freierr von der Goltz, Denkwürdigkeiten, Berlin, 1929.

⁵⁹ Ամերիկյան հետպան Յենի Մորգենթաուի հուշերը և հայկական եղենի գաղտնիքները, քաղաքամիջ՝ Ենուք Արմեն, Եր., 1990: Նույնի՝ Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, New York, 1918.

⁶⁰ Քյունցլեր Յ., Արյան Եվ արցունքի Երկրում, տպավորություններ Միջագետքից աշխարհամարտի տարիներին (1914-1918), Եր., 2011:

Առաջին ենթագլխում՝ «Գերմանիայի ծրագրերն արևմտահայության նկատմամբ Առաջին աշխարհամարտի նախօրյակին և սկզբնական ժամանակաշրջանում», ամփոփ կերպով ներկայացված է Կայսերական Գերմանիայի արևմտան քաղաքականության հիմնական դրույթները: Անդրադարձ է կատարված հայկական բարենորոգումների հարցում Գերմանիայի վարած թուրքամետ քաղաքականությանը: Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցում գերմանացիները մի կողմից փորձում էին պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, բայց և ոչ էական բարեփոխումներով իրենց կողմը գրավել արևմտահայությանը, իսկ մյուս կողմից՝ մեծ տերություններին հասկացնել, որ Արևմտյան Հայաստանը ևս գտնվում է Կայսերական Գերմանիայի շահերի ոլորտում և Հայկական հարցի լուծման գործում պետք է հաշվի առնվեն նաև նրա շահերը:

Մանրամասն ներկայացված է 1914 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմի և Թուրքիայի մեծ վեզիր Սահիմ Հայիմ միջև կնքված գերմանա-թուրքական ռազմական պայմանագրի պայմանները⁶¹, ինչպես նաև նույն թվականի օգոստոսի 6-ի Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքված լրացրցի համաձայնագիրը: Պետք է նշել, որ գերմանա-թուրքական ռազմական պայմանգիրը դեմ էր հայ ժողովրդի շահերին, քանի որ Գերմանիան պարտավորվում էր աջակցել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը, ինչպես նաև նպաստել արևմտում նրա նվաճողական ծրագրերի իրականացմանը:

Հիմնավորվում է այն տեսակետը, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին և սկզբնական ժամանակաշրջանում արևմտահայության քաղաքական դիրքորոշումը շարունակում էր մնալ ուսամետ, որի պատճառով գերմանացիների վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ առավել բացասական դրսերում ստացավ:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայկական հարցի նկատմամբ Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը մինչև Հայոց եղենը» քննվել են գերմանական իշխանությունների վերաբերմունքը պանրութիստական ծրագրերի և նաև ավագանությունների վերաբերմունքը պատճառաբանելու համար հայության, ինչպես նաև խորհրդային որոշ պատճառաբանների աշխատություններում գերմանական իշխանությունների վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ այնպես է ներկայացվում, թե իր գերմանացիներն են հիացել և եռանդրուն կերպով աջակցել Հայոց ցեղասպանության իրականացմանը: Աստեղախոսությունում հիմնավորվում է այն դրույթը, որ նման պնդումներն փաստարկված հիմնավորումներ չունեն, քանի որ հայերի տեղահանության ու կոստորածների ծրագրին երիտրութերը հետամուտ էին դեռևս 1911 թ., երբ Սալոմիկում կայացած երիտրութերի խորհրդակցության ժամանակ դրոշում ընդունվեց հայության բնաջնջման վերաբերյալ, և միայն նպաստավոր իրադրության էին սպասում, այն իրականցնելու համար: Այլ հարց է, որ Կայսերական Գերմանիան որպես Թուրքիայի գլխավոր դաշնակից, Առաջին աշխարհամարտում ամեն գնով հաղթելու և Մերձավոր Արևելքում իր շահերից ելնելով, ինչպես նաև, քաջատեղյակ լինելով պանրութական ծրագրերին, ոչինչ չարեց արևմտահայությանը կոտորածներից փրկելու համար:

Փաստերը վկայում են, որ Գերմանիայի ղեկավարությունը տվել է իր համաձայնությունն արևմտահայերի՝ «պատերազմական շրջաններից» տեղահանության հարցում: Օտտո Գյոփերտը, որը 1915 թ. հունվարից Կ. Պոլսի գերմանական դեսպանատանը գրավվում էր հիմնականում տնտեսական հարցերով, իր նամակում նշել էր, որ «վերաբերակեցման միջոցառումներն իրականացվել են ոչ

⁶¹ Տես Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը, Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Եր., 2002, էջ 142:

միայն արևելյան գավառներում, ինչպես մենք համաձայնվել էինք, այլ ամբողջ կայսրությունում»⁶²: Հետևաբար, 1915 թ. սկսված Հայոց ցեղասպանության երիտրության ժրագիրը հայտնի էր գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաներին:

Երկրորդ գլուխը՝ «ՀԱՅՑ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻ ՔԱՅԱԿԱՆԻ ԲԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ», բարկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հայոց ցեղասպանությունը և Կայսերական Գերմանիան 1915 թվականին», վերլուծության է ենթարկված Հայոց ցեղասպանության նկատմամբ Կայսերական Գերմանիայի կենտրոնական իշխանությունների, ինչպես նաև Կ. Պոլսում գերմանական դեսպան Հանս ֆոն Վանգենհայմի, դիրքորոշումը արևմտահայության տեղահանության և կոտորածների գործում: Ներկայացվում է այդ հարցի վերաբերյալ ինչպես հայ, այնպես էլ օտար ուսումնասիրողների տեսակետները:

Արևմտահայերի տեղահանության և կոտորածների նկատմամբ Կայսերական Գերմանիայի դիրքորոշման վերհանման տեսանկյունից կարևոր է 1915 թ. մայիսի 18-ին երգումի հյուպատոսության ուղարկած գեկուցագիրը, որտեղ նշվում էր. «Հազարավոր կանայք և երեխաներ, առանց սննդի կուտակվել են քաղաքի շրջակայքում: Անհմաստ արտաքսումը մեծ զայրույթ է առաջացնում: Թույլ կտա՞ք այդ կապակցությամբ քայլեր ծենարկել գլխավոր հրամանատարության նոտ»: Ի պատասխան երգումի հյուպատոսության՝ Կ.Պոլսի գերմանական դեսպանությունը մայիսի 19-ին հեռագրեց. «Դուք լիազորված եք այդտեղի գլխավոր հրամանատարության նոտ առարկություններ անել արտաքսված հայերի կապակցությամբ և պահանջել, որ մարդասիրական վերաբերնունք ցույց տրվի աքսորված բնակչության հանդեպ»⁶³: Գերմանական դեսպանությունն երգումի իր դիվանագետներին հորդորում էր հանդես գալ ոչ թե կտրուկ միջոցներով, այլ առարկություններով, ինչը, բնականաբար, որևէ արդյունք չէր կարող տալ:

Հակիրծ կերպով ներկայացվում է 3. Լեփսիհուսի և նրա ղեկավարած «Գերմանա-հայկական» ընկերության գործունեությունը: Անդրադարձ է կատարված 1915 թ. հուլիսին Լեփսիհուսի ուղևորությանը Օսմանյան կայսրություն, որտեղ գտնվելու ընթացքում նրան հաջողվեց աներիկյան դեսպանությունում, հայոց պատրիարքությունում, գերմանական, շվեյցարական ու ամերիկյան առաքելություններում և բուրժական որոշ պաշտոնյաների հետ ունեցած իր կապերի միջոցով հավաքել վկայություններ բուրժական իշխանությունների կատարած հանցագործությունների մասին:

Ատենախոսության մեջ փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տրվում, որ Գերմանացի պաշտոնյաներին անհանգստացնում էր այն հանգանքը, որ արևմտահայերի նկատմամբ երիտրուրերի գործողությունների մեջ միջազգային հանրությունը կմեղադրի իրենց, քանի որ Գերմանիան Թուրքիայի գլխավոր դաշնակիցն էր: Ուստի 1915 թ. հուլիսի 4-ին և օգոստոսի 9-ին Կ.Պոլսի գերմանական դեսպանությունը հուշագիր հանձնեց Թուրքիայի մեծ վեզիրին, որն արտահայտում էր հայերի կոտորածների և տեղահանության վերաբերյալ պաշտոնական Գերմանիայի դիրքորոշումը:

Վերլուծելով Կ. Պոլսի գերմանական դեսպանության հուշագիրները կարող ենք փաստել.

1. Կայսերական Գերմանիայի կառավարությունը պաշտոնապես ընդունում էր հայերի տեղահանության օրինականությունը և այն հիմնավորում ռազմական

⁶² Գուտտ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916, էջ 101:

⁶³ Նույն տեղում, էջ 181:

Ակատառումներով: Ավելին, այն ներկայացվում էր որպես թուրքական պետության ինքնապաշտպանության միջոց՝ ընդուն հնարավոր ապստանդրությունների:

2. Անտանտի տերությունների կողմից հայերի տեղահանության, աքսորի և կոտորածների վերաբերյալ մայիսի 24-ի հայտարարության ընդունումը պաշտոնական Բեռլինը ներկայացնում է որպես կշտամբանք Թուրքիայի նկատմամբ՝ դրանով փորձելով կոծկել երիտրուրքերի վայրագությունները և դաշնակիցների կողմից ննան հայտարարագրի տարածումը ներկայացնել որպես աշխարհամարտի տարիներին հակամարտող կողմից հակարությական և հակագերմանական քարոզություն:
3. Գերմանիայի կառավարությունը հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների մեջը փորձում է բարոել ոչ թե բուրք բարձրաստիճան պաշտոնյաների, որոնց հրամանով էր սկսել այդ աղետը, այլ տեղական իշխանությունների վրա, որոնք իրե չեմ կարողացել հավուր պատշաճի կազմակերպել տեղահանությունը:
4. Միջազգային հանրության մոտ որպեսզի չստեղծվի այնպիսի տպավորություն, որ գերմանացիներն այդ հարցում առանց վերապահումների աջակցում են երիտրուրքերին, պաշտոնական Բեռլինը հուշագրում կոչ արեց թուրքական իշխանություններին բոյլ չտալ բռնությունների շարունակումը:

Այսպիսով, Կ.Պոլսի գերմանական դեսպանության կողմից թուրքական իշխանություններին հանձնված հուշագրերը երիտրուրքերի վրա որևէ ազդեցություն չունեցան և հայերի նկատմամբ հրականացվուի բռնություններն ու թալանը շարունակվում էին: Ավելին, գերմանական մանուկում հրապարակվում էին հակահայկական հոդվածներ, որտեղ հայերին մեղադրում էին ապստամբության և հակապետական գործողությունների մեջ՝ դրանով արդարացնելով թուրքերի ցեղասպանականությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «Գերմանացի հյուպատոսների վարքագիծը Հայոց ցեղասպանության հարցում», ներկայացված է Օսմանյան կայսրությունում գործող գերմանացի հյուպատոսների դիրքորոշումը հայերի տեղահանության և կոտորածների հարցում:

Առաջին աշխարհամարտի տարիներերին Հայոց ցեղասպանության և հայության նկատմամբ Կայսերական Գերմանիայի դիրքորոշման ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է Օսմանյան կայսրությունում գտնվող գերմանական հյուպատոսների գործունեության վերհանումը, քանի որ Վերջիններս տարածաշրջանում գերմանական պաշտոնական քաղաքականության իրականացնողներն էին: Մյուս կողմից գերմանացի դիվանագետների գործունեության ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկերացում կազմել արևմտահայության նկատմամբ Գերմանիայի կողմից հրականացվող քաղաքականության մասին:

Փաստերը վկայում են, որ Կայսերական Գերմանիայի կառավարությանը, հայերի հարցում պատասխանատվությունից խուսափելու համար, երեմն հարկավոր էին գերմանացի գործիչների հայամետ հայտարարությունները: Այդ առիթով տեղին է մեջքերել երգումում գերմանական հյուպատոս Շոյեներ-ՈՒխստերի հետևյալ խոսքերը. «Նետագայում իմ կառավարությանը, հավանաբար, միայն հաճելի կլինի ինանալ և հայտարարել, թե այնտեղ նրա ներկայացուցիչը օրինական բոլոր միջոցներով, որ նա

ունեցել է իր տրամադրության տակ, հանդես է եկել անմեղ տառապյալների հետ մարդասիրաբար և օրինականորեն վարվելու պաշտպանությամբ»⁶⁴:

Աստենախոսությունում ներկայացվում է նաև հայ բնակչության տեղահանության և կոտորածների հարցում գերմանացի դիվանագետների ու գինվորականների փոխհարաբերությունները, որը հայենական պատմագրության մեջ խորապես ուսումնասիրված չէ: Օսմանյան կայսրությունում պաշտոնավարող գերմանացի որոշ դիվանագետներ քննադատում էին Թուրքիայում գործող գերմանական բարձրաստիճան մի քանի սպաների բացահայտ հակահայկական դիրքորոշումը, իսկ գինվորականներն իրենց հերթին գտնում էին, որ դիվանագետները չպետք է միջամտեն քուրքական կայսրության «ներքին գործին» և վտանգեն գերմանաբորդության դաշնակցային հարաբերությունները:

Աստենախոսությունում հիմնավորվում է այն տեսակետը, որ Թուրքիայում գործող գերմանացի հյուպատոսներն որևէ իրավասություն և հնարավորություն չունեին տեղերում հայերի տեղահանության և կոտորածների կանխման համար: Սակայն գերմանացի հյուպատոսների և դիվանագետների մեջ գտնվեցին սակավարիկ գործիչներ, որոնք ամեն ջանք գործադրում էին ցեղասպանության կանխարգելման և հայության փրկված հաստվածին սովոր և համաճարակներից փրկելու նատակով:

Երրորդ գլուխ՝ «ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՔՈՂՈՇՈՒՄՍ ԱՐԵՎԱՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ 1916-1918 ԹԹ.», բաղկացած է չորս ենթագլուխից:

Առաջին ենթագլուխ՝ «Յայոց ցեղասպանության հարցում գերմանացի գինվորականների դերակատարության խնդիրը», վերլուծության է ենթարկված Օսմանյան կայսրությունում ծառայող գերմանացի գինվորականների դերակատարությունը Յայոց ցեղասպանության հարցում: Այս հարցը հայրենական պատմագրության մեջ խորապես ուսումնասիրված չէ:

Աստենախոսության այս ենթագլուխում կարևոր տեղ է հատկացվում 1913 թ. դեկտեմբերին Թուրքիա ժամանած գերմանական ռազմական առաքելության կազմում գտնվող գերմանացի բարձրաստիճան գինվորականների դերակատարությանը հայերի տեղահանության և կոտորածների գործում: Վերլուծության է ենթարկվել գերմանական ռազմական առաքելության դեկավար Լիման ֆոն Սանդերսի և Ֆելիդմարշալ ֆոն դեր Գոլիցի գործունեությունը հայերի տեղահանության և ինքնապաշտպանական մարտերի ճնշման հարցում:

Նույն ենթագլուխում ուսումնասիրվող խնդիրներից մեկն էլ Յայոց ցեղասպանության գործում գերմանացի գինվորականների անմիջական նաև նակագույքան հարցն է, քանի որ Օսմանյան կայսրությունում գործող գերմանացի բարձրաստիճան գինվորականների մի մասը հայերի տեղահանության և կոտորածների հարցում թուրքամետ դիրքորոշում ունեն, որն արտահայտվում էր թե՝ նրանց գործելառությունը հայերի տեղահանության և ինքնապաշտպանական մարտերի ճնշման հարցում: և թե՝ հայտարարություններում:

Փաստերի համակողմանի վերլուծությունը հաստատում է, որ գերմանացի որոշ գինվորականներ ոչ միայն խրախուսել են հայերի նկատմամբ երիտթուրքերի բռնությունները, այլև անմիջական մասնակցություն են ունեցել հայերի ինքնապաշտպանական մարտերի ճնշման գործին, ինչպես նաև ստորագրել են հրաման Բաղդադի երկարուղում աշխատող հայերի տեղահանության համար:

Աստենախոսության մեջ ցույց է տրվում, որ ցանկության դեպքում գերմանիայի դեկավարությունը կարող էին խոչընդոտել հայության նկատմամբ իրականացվող երիտթուրքերի տեղահանության և կոտորածների բաղաքանությունը, որի մասին են հաստատում հետևյալ դեպքերը. 1914 թ. դեկտեմբերին Զեմալ փաշան պաղեստինցի

⁶⁴ Նույն տեղում, էջ 17:

հրեաների արտաքսման հրաման էր տվել, սակայն Վանգենհայմի ճնշման տակ նույն թվականի դեկտեմբերի 18-ին այդ հրամանը չեղյալ հանարկվեց: Գերմանացի զինվորականները պաշտպանեցին նաև Վրացիներին, երբ բռլիբերը 1918 թ. դեպի Թիֆլիս էին արշավում:

Կայսերական Գերմանիայի դեկավարությունը հորդորում էր իր զինվորականներին չմիջանտել հայերի օգոստին, որպեսզի չսրի հարաբերությունները բռլիբական իշխանությունների և զինվորականների հետ: Դետևաբար այն պնդումները, թե գերմանացի զինվորականները ցանկության դեպքում կարող էին ամբողջությամբ կանխել արևմտահայության տեղահանությունը և կոտրությունները չի հանապատճախանում իրականությամբ, քանի որ նման միջանտությունը կիանգեցներ գերմանա-բռլիբական դաշնակցային հարաբերությունների խիստ սրմանը, իսկ հայերի պատճառով գերմանական կառավարությունը չէր ցանկանում վտանգել իր հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ:

Երկրորդ Ենթագլխում՝ «Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը հայ գաղթականության հանդեպ 1916-1917 թթ.», վեր է հանված գերմանական իշխանությունների քաղաքականությունը հայ գաղթականության աջակցման խնդրում:

Ուսումնասիրվող նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ գաղթականներին օգնելու հարցում պաշտոնական Բեռլինը նախընտրեց ոչ պաշտոնական ճանապարհը, քանի որ նտավախություն ուներ, որ հայերին օգնություն ցուցաբերելու կարող է հանգեցնել գերմանաթուրական հարաբերությունների սրմանը: 1916 թ. փետրվարի 26-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Յիմերմանը, անդրադառնալով հայ գաղթականներին աջակցելու խնդրին, նշում էր. «1915 թ. Հայաստանի տուժածների համար Ըվեցարական օժանդակության միության հանձնաժողովի դիմումը՝ մեղմացնել բռնագաղթված հայերի տառապանքը, սիրով կրնունվի ու կիովանավորվի կայսերական կառավարության կողմից, ինչքան հնարավիր է, ապահովելով պահանջված հարգանքը դաշնակց Թուրքիայի նկատմամբ, օգնել ոչ պաշտոնական ճանապարհով»⁶⁵: Յիմերմանը արտահայտում էր պաշտոնական Բեռլինի տեսակետը, որը իմբնված էր գերմանաթուրական դաշնակցային հարաբերությունների պահպանման, ինչպես նաև միջազգային և սեփական հաճրության շրջանում այն տպավորության ստեղծման, իբր կայսերական Գերմանիան իսկապես մտահոգված է հայ գաղթականներին աջակցելու խնդրում և նախասուում է այդ հարցով գրադդու բարեգործական ընկերություններին:

Նայ պատմագրության մեջ լավ ուսումնասիրված չեն այն պատճառները, որոնք ստիպում էին գերմանական կառավարությամբ լրջորեն մտահոգվել հայ գաղթականների խնդրով և որոշ հեղինակներ գերմանական օգնության հիմքում տեսնում էին բացառապես մարդասիրական մղումներ: Սակայն Պաշտոնական Բեռլինին չափազանց մտահոգում էր այն փաստը, որ Միջազգետիք անապատներում ապաստանած և հակառակութական ու հակագերմանական տրամադրություններ ունեցող հայ գաղթականները, առնվազն պարենավորման տեսանկյունից, կարող էին խոչընդոտել հարավային ճակատում գերմանաթուրական գործերի ռազմական հաջողություններին: Դետևաբար, հայ բնակչությանը օգնություն տրամադրելու գերմանական մտադրությունների հիմքում ընկած էր ոչ թե մարդասիրական, այլ կոնկրետ ռազմական շահը:

Երրորդ Ենթագլխում՝ «Կայսերական Գերմանիան և արևմտահայությունը 1916 թ. Վերջից մինչև 1917 թ. Ինկարնեմբերյան հեղաշրջումը», փորձ է արվում Վերլուծել Արևմտյան Հայաստանի նկատմամբ գերմանական իշխանությունների դիրքորոշումը,

⁶⁵ Լեփսիուս Յ., նշվ. աշխ., հ. II, էջ 29:

ինչպես նաև 1917 թ. փետրվարյան հեղափոխության կարևորությունը արևմտահայության համար:

Ալտենախոսության մեջ հիմնավորվում է այն փաստը, որ եթե Կ.Պոլսում գերմանական նախկին դեսպան Վանգնեհայմը բացահայտ թուրքանետ դիրքորոշում ուներ, ապա նրան փոխարինած Վոլֆ-Մետերնիխը ակտիվորեն միջանտում էր թուրքերի առջև հայերի կոտորածները կամիսը նապատակով։ 1916 թ. հունիսի 10-ին Վոլֆ-Մետերնիխը կանցելեր Քերման Հոլվեգին գորում էր. «Հայերի հալածանքներն արևելյան նահանգներում թևակիսել են իրենց վերջին փուլը։ Թուրքական կառավարությունն իր ծրագրի իրագործման համար չփառվեց։ Հայկական հարցը Թուրքիան լուծեց հայերի բնաշնչման միջոցով»⁶⁶.

Այն փաստը, որ գերմանական կողմի բողոքները հայերի կոտորածները կամիսը նապատակով ծևական բնույթ ունեին, հաստատվում է 1916 թ. հունվարի 14-ի Գերմանիայի արտօգործնախարարության գաղտնի գեկուցագիրը, ըստ որի, գերմանացի դիվանագետ Յոհեննիխը թուրքական կառավարության անդամների հետ քննարկել է հայերի հալածանքների դադարեցման հարցը, սակայն նա այդ արել է այնպիսի ձևով, որ թուրքերը հազիվ թե զգային գերմանացների դժգոհությունը հայերի նկատմամբ երիտրուրելի վարած քաղաքականությունից⁶⁷:

Ալտենախոսությունում ցոյց է տրվում, որ հայկական հողերի ապագայի նկատմամբ Կայսերական Գերմանիան ոչ հայանպաստ դիրքորոշում ուներ։ Գերմանիայի արևելյան քաղաքականության մեջ դեռևս 1915 թ. վերջերին ծևակորվում էր Անդրկովկասում «անկախ» քաղաքական միավոր ստեղծելու գաղափարը⁶⁸։ Գերմանիայի դեկավարությունը միուրիխայի հովանավորությամբ և վրացիների աջակցությամբ ցանկանում էր ստեղծել Կովկասյան Ֆեդերացիա, որը համախմբելու էր տարածաշրջանի ժողովորդներին։

Չորրորդ Ենթագլուխում՝ «Գերմանիայի քաղաքականությունն արևմտահայության համեմայ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը», Վերլուծության են Ենթարկաված Կայսերական Գերմանիայի ծրագրերը արևմտահայության նկատմամբ։

Ալտենախոսությունում վերլուծության է Ենթարկաված Արևմտյան Հայաստանի տարածքների հարցում Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը Բրեստ-Լիտովսկի բանակցություններում։ Կարծում ենք, որ Գերմանիայի դեկավարությունը մտադիր էր, Թուրքիայի տարածքային նկրտումները մասամբ բավարարելու նպատակով, աջակցել թուրքական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի բռնազավթմանը։ Ուստի բանակցությունների ընթացքում գերմանական պատվիրակության դեկավար Ջուլմանը, որը մինչև այդ եղել էր Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպանը, հրաժարվեց քննարկել Հայկական հարցը և հավանություն տվեց ռուսական զորքերն Արևմտյան Հայաստանից հանելու թուրքական կողմից պահանջին՝ քաջ գիտակցելով, որ այդ տարածքների վերագրավումը թուրքերի կողմից հանգեցնելու է արևմտահայության նոր կոտորածների ու տեղահանության։

Փաստերը վկայում են, որ Գերմանիայի դեկավարության համար կարևոր էր, որպեսզի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Արևմտյան Հայաստանը գտնվի Օսմանյան կայսրության կազմում։ Ուստի գերմանական իշխանությունները թուրքերին հորդորում էին այդ տարածքները վերագրավելուց հետո հայ բնակչության

⁶⁶ www.armenocide.de (10.07.1916).

⁶⁷ Sieu Österreich-Armenien 1872-1936, Faksimilesammlung diplomatische Aktenstücke, (Herausgegeben und eingeleitet von Artem Ohandjanian), Wien, 1995, Band VI, էջ 4982:

⁶⁸ Sieu Ավետիսյան Յ., Հայկական հարցը 1918 թ., էջ 9:

Ակատմանը բարյացակամ վերաբերնունք դրսենորել, որպեսզի Անտանտի տերությունները Հայկական հարցի միջոցով թուրքիայի վրա ճնշում չգործադրեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եղահանգումները.

- Կայսերական Գերմանիայի արևելյան քաղաքականության ոլորտում Արևմտյան Հայաստանը կարևոր տեղ էր գրադեցնում և ռազմավարական կարևորություն ուներ: Գերմանիայի ղեկավարությունը դրական նոտեցում ցուցաբերեց հայարնակ նահանգներում բարեփոխունների իրականացման հարցում: Նաև դիրքորոշումը պայմանավորված էր մի քանի գոծոններով, որոնցից առաջնայինը արևմտահայության շրջանում ռուսական ավանդական ազդեցության բոլոցումն ու գերմանական կողմնորոշման ընդլայնումն էր, հայարնակ տարածքներում բուրքական տիրապետության անրապնդում և Արևմտյան Հայաստանում գերմանական տնտեսական ու քաղաքական ազդեցության մեծացումը: Սակայն արևմտահայության քաղաքական դիրքորոշումը շարունակեց մնան ռուսամետ, իսկ Հայկական հարցը շահարկվում էր մեծ տերությունների կողմից: Այդ իսկ պատճառով Արածին աշխարհամարտի սկզբից գերմանացիների վերաբերմունքն արևմտահայության մկանամբ առավել բացասական դրսենորւմ ստացավ:
- Ուսումնասիրվող ժամանակահատվածում Գերմանիայի ղեկավարությունը Արևմտյան Հայաստանի հարցում չուներ հստակ հայեցակարգ: Իսկ այն պնդումները, թե երիտրուրքերի կողմից թուրքիայում բնակվող հայությանը ցեղասպանության ենթարկելով դրագիրն առաջարկվել է գերմանացիների կողմից չեն համապատասխանում իրակնությանը, քանի որ դեռևս Արածին աշխարհամարտի նախօրեին երիտրուրքերը մշակել էին արևմտահայության տեղահանման ու կոտորածների ծրագիրը: Հայ պատմագրության մեջ արևմտահայության մկանամբ գերմանական կենտրոնական իշխանությունների դիրքորոշման վերաբերյալ հաճախ մկատվում են չիհմնավորված կարծիքներ: Մասնավորապես կարելի է հանդիպել այն տեսակետին, որ գերմանական իշխանությունները շահագրգռված էին հայ բնակչության տեղահանության հարցում, քանի որ ցանկանում էին նրանց բնակեցնել Բաղդադի երկարուղու տարածքներում: Սակայն փաստերը հաստատում են, որ Գերմանիայի ղեկավարությունը նման ծրագրեր չի ունեցել, քանի որ եթե ունենար, ապա նշված տարածքներում կստեղծեր բնակվելու տարրական պայմաններ և չեր իրաժամկետ պաշտոնական օգնություն ցուցաբերել Միջազգետքի անապատներ արսորված հայ գաղքականներին:
- Այն պնդումները, իբր Գերմանիայի ղեկավարությունը տեղյակ չի եղել հայերի տեղահանության և կոտորածների երիտրուրքական ծրագրերին, չունեն լուրջ հիմնավորումներ: Օսմանյան թուրքիայում ծառայող գերմանացի բարձրաստիճան զինվորականները, որոնք բուրքական բանակում կարևոր պաշտոններ էին գրադեցնում, չեր կարող տեղյակ չլինել, որ երիտրուրքերն ունեն հայերի տեղահանության և կոտորածների ծրագիր:
- Գերմանական իշխանությունները իրական քայլեր չիրականացրեցին Հայոց ցեղասպանության կանխման համար: Ավելին, գերմանացի բարձրաստիճան որոշ զինվորականներ անգամ աջակցեցին այդ ծրագրի կազմակերպման աշխատանքներին, քանի որ հնարվոր չէ, որ գերմանացի բարձրաստիճան սպաններ կամխավ տեղյակ չլինեին, թե տեղահանված ժողովությին որ ճամբարներում էին կենտրոնացնելու և որ զորամասերն են իրականացնելու այդ որոշումը: Անգամ գյուրթյուն ունեն փաստեր, որոնք հաստատում են, որ

- Կայսերական Գերմանիայի դեկավարությունը տվել է իր համաձայնությունն արևմտահայերի «պատերազմական շրջաններից» տեղահանությամ հարցում:
- Կայսերական Գերմանիայի իշխանություններն ամբողջովին չեն կարող կանխել արևմտահայության տեղահանությունը և կոտրածները, քանի որ դա կիանցեցներ թուրք-գերմանական հարաբերությունների խիստ սրմանը կամ դաշնակցային հարաբերությունների դադարեցմանը: Սակայն փաստ է, որ Գերմանիայի դեկավարությունը ցանկության դեպքում կարող էր նվազեցնել հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրականացվող բռնությունները, իսկ առանձին դեպքերում նաև ամբողջովին կանխել: Սակայն Գերմանիայի և հայ ժողովրդի շահերը չեն հաճնենալում, իսկ պաշտոնական Բեռլինի հիմնական խնդիրն էր ամեն գնով հարել պատերազմում, որի համար հարկավոր էր պահպանել գերմանաբռնքական դաշինքը:
 - Օսմանյան կայսրությունում գործող գերմանացի դիվանագետները ողջ աշխարհանարտի ընթացքում հայերի տեղահանության ու կոտրածների վերաբերյալ իրականացրեցին կարող փաստագրություններ: Սակայն աղետը կանխելու նպատակով նրանք որևէ էական քայլերի չփիմեցին, քացի իրենց թուրք դաշնակիցներին «բարեկամական խորհուրդներ» և «բողոքներ» հայտնելուց, ինչը պայմանավորված էր Կայսերական Գերմանիայի պաշտոնական քաղաքականությամբ: Թուրքիայում գործող Գերմանիայի հյուպատոսները որևէ իրավասություն և ինարավորություն չունեն տեղերում հայերի տեղահանության և կոտրածների կանխման համար, քանի որ Կ.Պոլսի գերմանական ինսպասարտան կողմից նրան համձնարկվել էր համարավորինս գերծ մնալ հայերի օգտին միջամտելուց: Սակայն գերմանացի հյուպատոսների և դիվանագետների մեջ գտնվեցին սակավարթիվ գործիչներ, որոնք ամեն ջանք գործադրում էին ցեղասպանության կանխարգելման և հայության փրկված հատվածին սովոր և համաճարակներից փրկելու նպատակով:
 - Թուրքիայում ծառայող գերմանացի բարձրաստիճան գինվորականների մեծ մասը հայերին համարում էր ռուսների դաշնակիցներ և նրանց նկատմամբ վերապահումով էր տրամադրված և եթե բացահայտ չեն խրախուսում հայերի հանդեպ թուրքերի գործողությունները, ապա հիմնականում հանդես էին գալիս դիտորդի դերում: Յայերի տեղահանության հարցում Կայսերական Գերմանիայի մեղակցությունը հաստատող հիմնական փաստարկները պայմանավորված են գերմանացի որոշ բարձրաստիճան գինվորականների՝ այդ իրադարձություններին անմիջական մասնակցություն ունենալու փաստով: Դրանք հիմնավորվում են ինչպես փոքրաբիկ արխիվային փաստաթղթորով, այնպես էլ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող տվյալ ժամանակաշրջանի գործիչների հուչերով ու մամուլի նյութերով: Սակայն գերմանացի գինվորականների մեջ կային նարդիկ, ուվեր խիստ դատապարտում էին թուրքերի ոճագործությունները, և կոչ էին անում իրենց երկիր դեկավարությանը միջամտել սպանդը դադարեցնելու համար:
 - Կայսերական Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ հայ գալրականներին օգնություն ցուցաբերելու խնդիրը կարևորվում էր այնքանով, որքանով անհրաժեշտ էր միջազգային հանրության մոտ այս տպավորությունը ստեղծել, որ գերմանացիները մեղսակից չեն երիտրութերի ցեղասպան քաղաքականությանը: Գերմանիայի դեկավարությունը հրաժարվեց հայության փրկված հատվածին պաշտոնական աջակցություն ցուցաբերելուց՝ հաշվի առնելով թուրքերի դժգոհությունը: Լեփսիուսի դեկավարած «Գերմանիայկան ընկերությունը», ինչպես նաև գերմանական, շվեյցարական,

- ամերիկյան և այլ բարեգործական կազմակերպություններ, բավականին մեծ աշխատանք իրականացրեցին հայերին փրկելու նպատակով, սակայն միջոցների սղության պատճառով այդ կազմակերպություններն ի վիճակի չէին օգնել ողջ հայ օպերականությանը:
- Աշխարհամատի վերջին շրջանում Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը Արևմտյան Յայաստանի հարցում շարունակում էր թուրքամետ լինել: Գերմանական իշխանություններին մտահոգում էր այն փաստը, որ այդ տարածքները ռուսական բանակի կողմից գրավելուց հետո այն կարող էր բնակեցվել կազմակերում, իսկ հայ օպերականներին հնարավորություն էր տրվում վերադաշնալ իրենց բնակավայրերը, ինչը նշանակում էր, որ Ռուսատանը ամրապնդում է իր դիրքերը տարածաշրջանում և խափանում այն նվաճելու գերմանական ծրագրերը:
 - Բրեստ-Լիտոսվիկի բանակցություններում Կայսերական Գերմանիան Արևմտյան Յայաստանի ապագան տեսնում է Օսմանյան կայսրության կազմում: Գերմանիայի ղեկավարությունը դեմ էր, որպեսզի թուրքերի կողմից վերագրաված տարածքներում տեղի ունենան հայ բնակչության նոր կոտորածներ, քանի որ դա կարածացներ միջազգային հանրության քննադատությանը: Գերմանական կողմը հայերի կոտորածները դադարեցնելու պահանջով հանդես եկավ թուրքական իշխանությունների առջև, սակայն արևմտահայությանը նոր կոտորածներից փրկելու համար Գերմանիայի ղեկավարությունը գործնական քայլեր չիրականացրեց, քանի որ դա չէր բխում իր շահերից:
 - Կայսերական Գերմանիան մեղսակից է Յայոց ցեղասպանության հարցում, քանի որ, հանդիսանալով Օսմանյան կայսրության դաշնակիցը, հանդուժեց հայերի կոտորածները, մինչդեռ կարող էր դրանք մեղմել, իսկ առանձին դեպքերում նաև ամբողջովին կանխել: Գերմանացի որոշ բարձրաստիճան գինվորականներ անմիջական մասնակցություն են ունեցել արևմտահայության տեղահանությանը և ինքնապաշտպանական մարտերի Ծննդանը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

- 1.Արևմտահայության մկանամբ Գերմանիայի մտադրությունները Առաջին աշխարհամարտի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի հասարակական գիտությունների», թիվ 133.1, Եր., 2011, էջ 37-45:
2. Գերմանացի հյուպատոսների վարքագիծը Յայոց ցեղասպանության հարցում, «Բանբեր Երևանի համալսարանի հասարակական գիտությունների», թիվ 135.1, Եր., 2011, էջ 48-56:
3. Յայոց ցեղասպանությունը և գերմանացի գինվորականների դերակատարությունը, «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես Բ, Եր., 2011, էջ 140-149:

Мелконян Геворг Гагикович

**Западная Армения в сфере восточной политики Германии
в годы Первой мировой войны (01.08.1914-03.03.1918)**

**Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по
специальности 07.00.01 "История Армении"**

**Защита состоится 29-го июня 2012 г. в. 14⁰⁰, на заседании специализированного совета
по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр.
Маршала Баграмяна 24/4).**

РЕЗЮМЕ

В диссертации на основе различных источников и научных исследований опубликовались спорные вопросы, которые относятся политике Кайзеровской Германии по отношению западных армян в годы Первой мировой войны. Диссертация содержит в себе период от августа 1914-го до марта 1918-го г., то есть начало Первой мировой войны до договора Брест-Литовска. Работа состоит из предисловия, трех глав, заключения/послесловия и списка использованных источников и литературы.

В первой главе кратко представлены основные принципы восточной политики Кайзеровской Германии. Обращалось внимание протуркской политике Германии по вопросу армянских реформ. Детально представлены условия германо-турецкого договора, заключенного между германским послом в Константинополе Вангенгаймом и великим визирем Саидом Галимом 2-го августа 1914 года, а также соглашением между Германией и Турцией, заключенным в августе того же года. Было подтверждено мнение, что накануне и в начале Первой мировой войны политическая позиция западных армян продолжалось оставаться прорусской, и поэтому отношения немцев к западным армянам становилось более негативным. Факты показывают, что правительство Германии дало соглашение в отношении ссылок армян из “военных округов”. Отто Гепперт, который с января 1915-го года в основном занимался экономическими вопросами, в своем письме подчеркнул, что “Переселение было проведено не только в восточных регионах, но и в Османской империи в целом”. Из этого следует, что с начала 1915-го г. политика геноцида армян младотурок была известна германским высокопоставленным лицам.

Во второй главе анализируются позиции консулов центрального правительства Кайзеровской Германии, а также позиция посла в Константинополе Ганса фон Вангенгейма в отношении ссылок и переселения западных армян. Этот вопрос представляется как как армянскими, так и зарубежными исследователями. Кратко представлена деятельность И. Лепсиуса и возглавленная им “Германо-армянская” организация. Обращалось внимание на поездку Лепсиуса по Османской империи в июле 1915-го, где ему удалось собрать факты о турецких преступлениях в американском посольстве, в армянской патриархии, у германских, швейцарских и американских миссиях, у некоторых турецких чиновниках. В диссертации

содержатся богатые материалы, которые показывают, что германских чиновников беспокоил тот факт, что международная общественность обвинит их в союзничестве с младотурками за введение ими политики по отношению к западным армянам. 4-го июля до 9-го августа 1915 г. посольство Германии в Константинополе передал великому везиру меморандум, который выражал позицию Германии по отношению ссылок и резни западных армян. В диссертации подтверждается мнение, что в Турции германские консулы не имели никого права и возможности предотвратить ссылку и резню. Но среди них нашлись деятели, которые старались предотвратить геноцид и оказать помощь спасенным от эпидемии и голода.

В третьей главе анализируется роль германских военных, которые служили в Османской империи, их позиция об Армянском геноциде, а также позиция правительства Германии о геноциде армян и о вопросе армянских беженцев. В диссертации важное место занимает деятельность германской военной миссии, которая приезжала в Турцию в декабре 1913-го г.. Анализируется деятельность управляющего германской военной миссии Лимана фон Сандерса и фельдмаршала фон дер Гольца по вопросу ссылок и резни западных армян и подавление самооборонных военных действий. Анализируется позиции германского правительства по отношению к Западной Армении, в конце 1916-го г. до Октябрьской революции 1917-го г.. Представляется политика Германии по отношению западных армян с начала Октябрьской революции 1917-го г.до Брест-Литовского договора. В диссертации подтверждается тот факт, что германское правительство желело помочь Турции при захватывающих действиях в Западной Армении. Поэтому во время переговоров управляющий германской делегации Кюлман, который до этого был германским послом в Османской империи, отказался от дискуссии об Армянском вопросе и дал согласие требованию Турции, о выходе русских войск из Западной Армении, прекрасно понимая, что вновь завоеванные территории дают новый повод для новых ссылок и резни западных армян. Факты доказывают, что Западная Армения, находящаяся на территории Османской империи представляла военный интерес для правительства Германии.

В заключении изложены основные итоги и выводы исследования.

West Armenia in the sphere of Eastern Policy of Germany during World War I

(01.08.1914-03.03.1918)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on June 29, 2012, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The present thesis written on the basis of different documents and scientific studies contains analyses of the disputable problems dealing with the policy of Kaiser Germany toward the Western Armenians during World War I. The thesis study includes the period between 1914 August-1915 March from the beginning of World War I to the period of signing the Brest-Litovsk treaty.

The work consists of an introduction, three chapters, summery and the list of the used sources and literature.

The basic principles of the Eastern policy of the Kaiser Germany are briefly presented in the 1st chapter. Special attention is paid to the pro-Turkish policy of Germany on the matter of Armenian reforms. It gives a detailed discussion of the points of German-Turkish military assignment signed between the ambassador of Germany in Constantinople Vangenheim and Great Vesir of the Ottoman Empire Said Halim on August 2, 1914, and the additional agreement signed by Germany and Turkey. This thesis confirms the opinion that the political attitude of the Western Armenians continued to be pro-Russian on the Eve and the first period of World War I, because of which the behavior of Germans toward the Western Armenians became more negative. Facts testify that the government of Germany agreed on the deportation of the Western Armenians from the "War zone".

Otto Gopert, who had worked in the embassy of Germany especially on economical issues since January 1915 mentioned in his letter "the actions of replacement were realized not only in the Eastern regions as we had agreed upon, but also all over the Empire. Consequently high rank German officers knew about the plan of the Armenian genocide of Young Turks which was to begin in 1915.

In the 2nd chapter we analyze the attitude of the Central Government, of German consuls in the Ottoman Empire as well as that of the ambassador of Germany in Constantinople Hans Vangenheim toward the deportation and massacres of the Western Armenians. Standpoints of both Armenians and foreign researchers on the problem are presented by us. The action by J. Lepsius and the "Germany-Armenian" organisation headed by him are briefly presented as well. Special

emphasis is laid upon the travel of Lepsius to the Ottoman Empire where he managed to gather testimonies on cases of violence conducted by the Turkish Government from the Armenian patriarchy in the American embassy, German, Swiss and American missions and, also from some Turkish officers due to his associations. In the thesis, on the basis of rich documentary material, it is proved that German officers were very much concerned about the measures taken by the Young Turks toward the Western Armenians. They were afraid that that international community would blame them as Germany was the main ally of Turkey. Because of that the embassy of Germany in Constantinople passed a memorandum to the Great Vesir, which expressed the official attitude of Germany toward deportation and massacres of Armenians. In the thesis it is also proved that German consuls to Turkey had no right and opportunity to prevent deportation and massacres of Armenians. But there were some among the German consuls and diplomats who did their best to prevent the Genocide as well as hunger and epidemic among Armenian survivors.

In the 3rd chapter the role of German militarists, serving in the Ottoman Empire, during the period of the Armenian Genocide is analyzed, as well as the attitude of the German government on Armenian refugees. In the work much attention is paid to the role of high rank German military officers who arrived in Turkey in December in 1913 as members of the German military mission during Armenian deportation and massacres. The role of the head of German military missions, Liman von Sanders and feldmarshall von der Holtz, in deportation and in the crush of the fights of self-defense of Armenians is also discussed and analyzed. We have made an effort to analyze the attitude of the German government toward Western Armenia from the end of 1916 to October Revolution of 1917. The policy of Germany toward the Western Armenians from the October Revolution of 1917 to the assignment of Brest-Litovsk treaty is also discussed.

In this work we have made an effort to prove the fact that the government of Germany aimed to help the Turkish military forces to occupy the territory of Western Armenia to satisfy partially the wishes of the Turks. So, during the negotiations, the head of the German delegation Kulman, the former ambassador of Germany to the Ottoman Empire, refused to discuss the Armenian Question and agreed on the Turkish request to withdraw the Russian troops from the territory of Western Armenia, understanding quite well that the reoccupation of those territories by the Turks would result in new deportations and massacres. Facts show that it was strategically important for the government of Germany that Western Armenia, which was of great importance, stayed within the borders of the Ottoman Empire.

The main findings and results of the study are summarized in the conclusion.